

մշակն ալ կը յուսահատցընէ : Իսկայն ի վերայ այսր ամենայնի թէ որ ձեռք զարկածդ օրինաւոր ու համեստ բան է խիստ քիչ՝ կրնամ ըսել թէ ամենեւին չսպտահիր՝ որ դուն բարի նպատակիդ հասնելու համար պէտք եղած ջանքն ու մտադրութիւնը ու կարգաւորութիւնը բռնեւէն վերջը՝ քեզի կամ այլոց անկէց օգուտ մը չտեսնես . բաւական է որ գոհ ըլլալուն կերպն ու չափն ալ գիտնաս , ու միայն քու օգուտդ ու շահդ չմտածես հապա նաւ ազգականացդ , բարեկամացդ ու մանաւանդ հայրենեացդ . միայն արտաքին ու խիստ յայտնի օգուտներուն չնայիս՝ հապա մտածես նաւ անոր քու զբաղանացդ վրայ ունեցած հեռուանց հետեւութիւնները , դիտես հասարակաց անկէց յառաջ եկած հոգեւոր և կամ նիւթական պըտուղ մը . ու ան ատեն ապահով և ուրախ կեցիր որ ոչ երբէք քեզի աշխատասիրութեան գրգիռ , և կամ արդեանցդ վարձքը կրնայ պակսիլ :

---

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

##### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ մը քաղաքականութեան , գիտութեանց և արուեստից մէջ շուտով յառաջացընելու յարմար միջոցները որոնք են , և ինչպէս զանոնք ի գործ դնելու է աս վախճանիս հասնելու համար :

---

##### ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Սկզբից կրկին տարածութիւնը , բնակչաց թիւը ու գաղութականութիւնները :

ՍԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ տեղեկութիւնը ամէն կը թեալ ընկերութեանց և բանի բուն մարդկանց խօսելու մեծ համբար մըն է , և ժամանակն ալ օգտակար անցընելու մի միայն վայելուչ նիւթ , որ խօսողներն ու լսողները կը զուարճացը-

նէ , և կենցաղավարութեանց մէջէն աւելորդաբանութիւնները կը նուազեցընէ : Իսկ տեսակ խօսակցութիւնները ան ատենները աւելի կը յաճախեն՝ երբոր տէրութիւնները կամ պատերազմի պատճառաւ , կամ վիճակի ու կառավարութեան փոփոխութեամբ և կամ աշխարհակալութեւ ընդհակառակն երկիր ու տէրութեան մաս մը կորսնցընելով այլայլութիւն կը կրեն . որով ամէն մարդ իր բնական , և կրնանք ըսել անսպառաճ զգացմանցը համեմատ աս կամ ան տէրութեան կողմը կը բռնէ և կառավարութեան մը աս և կամ ան ճամբուն հաւնելով կը պաշտպանէ և կամ կառավարութեան դէմ կը դառնայ . կրնայ մակաբերուիլ թէ քանի ծուռ ու սխալ կարծիքներ և տեղեկութիւններ ընկերութեանց մէջ կը յաճախեն , և ամէն մարդ իբրեւ դեղփական պատգամներ կորոտայ իր տգիտութիւնները զուրիշները յաղթահարելու համար . որով փոխանակ օգտակար ըլլալով՝ փնասակար կ'ըլլան աս խօսակցութիւնները թէ լսողաց և թէ խօսողաց՝ տգիտութեւ մէջ հաստատուելով : Երբ որ յաճախ է աս տեսակ սխալական վարդապետութիւնները , մէկալ կողմանէ ալ զարմանալի կամ այնչափ մեղադրելի չեն , որովհետեւ շատ սուր յիշողութիւն մը պէտք է ունենալ աշխարհքիս ամէն տէրութեանց երկրին տարածութիւնը , բազմամարդութիւնը , յառաջագիմութիւնը , կառավարութեւ կերպը , իրենց այլ և այլ տեսակ զօրութիւնները , ժողովրդեան բարքը գիտնալ և միտք պահել , ու ըստ տեղեւոյն առանց իրարու հետ շփոթելու հաւաստի տեղեկութիւնը ըսել . աս պատճառաւ հարկաւոր է շարունակական գիտութիւն ու ծանօթութիւն մը ունենալ . և այնչափ առաւել որչափ որ ամէն տէրութիւն քիչ ատենի մէջ՝ մանաւանդ թէ ամէն տարի մեծ փոփոխութիւն կը կրէ ամէն տեսակ նիւթի մէջ և մանաւորապէս աս տարիներս : Իհա աս պատճառներուս համար ամէն կերպով կը ջանանք օրագիրներնուս մէ-



ըէն անպակաս ընել աս տեսակ հատուածները՝ հանելով ստոյգ և ապահով ազդեւորներէ, որ որչափ զուարճացուցիչ այնչափ ալ օգտակար են :

Լնգղիայէն սկսելնուս պատճառը աս է՝ որ աս տէրութիւնս քան զամէն եւրոպական տէրութիւններ աւելի մեծ, վիթխարի և ուրիշներէն աւելի հետաքննական տեղեկութիւններ ունի, և թէպէտ ամէն բանի մէջ վեր չէ, բայց մեծաւ մասամբ առաջինն է ու զուրիշները կը գերազանցէ : Լնգղիայ մուս միայն Լնգղիոյ երկրին տարածութեանը, բնակչացը ու իր գաղթականութիւններուն վրայ կը խօսինք :

Լնգղիան իր բոլոր կղզիներովը հիւսիսային լայնութեան  $49^{\circ}$  և  $60^{\circ} 55'$  և արևմտեան երկայնութեան  $0^{\circ}$ ,  $34'$  և  $12^{\circ} 50'$  մէջ կ'իյնայ, որով ցուրտ

թաղ և քիչ բարեբեր երկիր է, անանկ որ եթէ քանի մը տեսակ հանքաց առատութիւն չըլլար, և անոր վրայ ալ ժողովրդեան հանճարեղութիւնը գործունէութիւնը և անխոնջ յարատեւութիւնը չաւելնար՝ անբնակ երկիր մը կ'ըլլար անշուշտ. բայց ընդհակառակն հիմա ամէն աշխարհքէ աւելի ծաղկած է կրնանք ըսել : Լնգղիոյ աւելի զարմանալի է անգղիացւոց յառաջագիմութիւնը՝ որչափ որ ժողովուրդը քիչ է համեմատութեամբ իրենց բազմութիւ աշխարհակալութեանցը և անհամար ժողովուրդներու հրամանատու և իշխեցող ըլլալովնին : Հոս տեղի դրած ցուցակովնիս լաւ կը տեսնուի բրիտանական թագաւորութեան տարածութիւնը և բնակչաց թիւը :

ՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ

ԲՆԱԿԻՉԻ

| Տեղն քառ.         | աշխարհագրական | արք        | լանայ      | համագումար |
|-------------------|---------------|------------|------------|------------|
| Բուն Լնգղիա .     | 2722,76       | 8,523,387  | 9,382,447  | 17,905,834 |
| Սկոտլա .          | 1225,27       | 1,241,862  | 1,378,322  | 2,620,184  |
| Սկոտլ. կղզիները . | 198,93        |            |            |            |
| Ճըրսի, Կէրնզի .   | . . .         |            |            |            |
| Ալտերնի, Սաբբ .   | . . .         |            |            |            |
| Հարմ, Մէն, ու .   | . . .         |            |            |            |
| Կէթոյ, կղզիները . | 22,88         | 65,556     | 76,484     | 142,040    |
| Համագումար .      | 4169,84       | 9,830,805  | 10,837,253 | 20,668,058 |
| Իռլանտա .         | 1531,21       | 3,109,576  | 3,455,548  | 6,565,124  |
| Համագումար .      | 5701,05       | 12,940,381 | 14,292,801 | 27,233,182 |

Լն 27,232,182 ազգը զարմանալի կերպով մը աշխարհքիս գրեթէ հինգ մասին մէկ ու կէսին տիրած է . որովհետեւ եթէ չհարիւր միլիոնի չափ դնելով աշխարհիս բնակիչը 150,000,000 ու աւելին անգղիացւոց իշխանութեան տակ է . և որ մեծն է իրարմէ ահագին միջոցով հեռու աշխարհքներ լեզուով, կրօնքով ու բարքով բոլորովին անման ժողովուրդներ կը կառավարուին մեծ իմաստութեամբ ու խոհեմութեամբ . որով քիչ խռովութիւն կը պատահի, շուտով ու հսկայաքայլ կը քաղաքականան բարբարոս ժողովուրդները, արհեստները վաճառականութիւնը ու դիւրաւ ապրելու միջոցները կը շատնան զգալի

կերպով, անանկ որ մէկ ազգի մը տակ եղած ժողովուրդները այնչափ շուտով չեն յառաջանար՝ ինչպէս Լնգղիոյ հպատակ եղածները, որուն օրինակ և ապացոյց կրնայ ըլլալ Եթիոպիոյ հաջորդաց յառաջագիմ զարգանալը, որով մեծ խեղճով իրենց ազատութիւնը ստացան երկարատեւ պատերազմի մը և անոր չար հետեանացը դէմ դնելով : Օչարմանալի դիտելու բան մ'ալ աս է որ բուն Եթիոպիոյ տէրութիւնը կազմող 27 միլիոն ժողովրդեան գրեթէ չորսին մէկը օտար ժողովրդէ մը բաղկացած ըլլալով՝ ինչպէս է Իռլանտան, միշտ թշնամին իր տանը մէջ ունի, որ ոչ երբէք կրցեր է Լնգղիոյ կա-



ռավարութեան հետ սրտանց միանալ, այլ առթի կը սպասէ գլուխ վերցնելու. բայց Լնգղիա սրամիտ ճարտարութեամբ հանդարտ կը բռնէ զանոնք: Թէպէտև Սկովտիան ալ զատ ազգ և զատ ժողովուրդ է, բայց կրօնքով մէկ ըլլալուն համար՝ գրեթէ զգացմունքով ու սրտով միացած է Լնգղիոյ հետ: Հոս կը դնենք Լնգղիացւոց Լըրոպայի մէջ ու Լըրոպայէ դուրս ունեցած երկիրնին:

ԱՊՐԷԼԻԱՅԻՆ ԵՐԿՐԱՅԻ ՎԵՂ ԴԵՆԵՂԻՑ ԵՐԿՐԵՆԵՐԸ .

|              | մլ. քառ. Տգր. Բնակիչք. |         |
|--------------|------------------------|---------|
| Ճիւղաւթար    | 0,28                   | 11,318  |
| Մալթա, Կոցցո | 10,31                  | 118,759 |
| Հէլիոլէնա    | 0,23                   | 2,300   |

ԱՊՐԷԼԻԱՅԻՆ ԵՐԿՐԱՅԻ ԴԵՂ ԴԵՆԵՂԻՑ ԵՐԿՐԵՆԵՐԸ ԳԹԱՅԻՆ ԵՐԿՐԵՆԵՐԸ :

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

|                                |           |           |
|--------------------------------|-----------|-----------|
| Ստորին Քանադայ                 | 11,774,7  | 678,590   |
| Վերին Քանադայ                  | 4,709,9   | 486,055   |
| Նոր Պրուենսվէք                 | 1,304,8   | 156,142   |
| Նոր Սկովտիա                    | ,735,54   | } 178,237 |
| Գլուխ Պրեթմնի                  | ,147,18   |           |
| Կղ. Եգուարդ Իլէս.              | ,100,36   | 47,034    |
| Նոր Երկիր                      | 1,691,45  | 75,094    |
| Հուասոնի ծոց, ու Երջային երկիր | 17,426,50 | 500,000   |
|                                | 37,890,43 | 2,121,152 |

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

|                  |         |         |
|------------------|---------|---------|
| Անգիկոա          | 5,08    | 36,405  |
| Պարպատոէս        | 7,05    | 122,193 |
| Տոմինիկոս        | 12,95   | 18,291  |
| Կուլնատ          | 5,88    | 29,660  |
| Ճիւղաւթար        | 301,4   | 377,433 |
| Մոնտէրրա         | 2,21    | 7,119   |
| Նէվի             | 0,94    | 7,470   |
| Սուրբ Քրիստափոր  | 3,23    | 21,576  |
| Սուրբ Լուչիա     | 2,73    | 21,001  |
| Սուրբ Վինչենցիոս | 6,12    | 27,248  |
| Թապակո           | 8,8     | 13,205  |
| Թորթուլա         | 0,98    | 8,500   |
| Անկուիլա         | 4,23    | 2,934   |
| Երրորդութիւն     | 113,04  | 60,319  |
| Պաշտա            | 207,23  | 25,244  |
| Պէրմուտ          | 1,04    | 9,930   |
| Կուլանա          | 4709,9  | 102,354 |
| Հոնոուրա         | 2955,4  | 10,000  |
|                  | 8348,21 | 900,882 |

ԱՓՐԻԿԷ

|                           |         |         |
|---------------------------|---------|---------|
| Գլուխ Բարեյուսոյ          | 9419,8  | 159,451 |
| Ծոց Սիէրրա Լէոնայի        | . . .   | 39,839  |
| Գլուխ Կամպիոյ             | . . .   | 4,495   |
| Մաւրիտիա կամ կղզի Գալղիոյ | 31,84   | 174,699 |
| Քար քորս                  | . . .   | 40,000  |
| Ալքարա                    | . . .   | 20,000  |
| Ֆէրնանտո-փո               | . . .   | 2,000   |
| Սուրբ Հէլենէ              | 3,58    | 4,834   |
| Համբարձումն               | 1,64    | 2,800   |
| Սէյշէլէան                 | 3,76    | 1,000   |
|                           | 9460,62 | 449,118 |

ԱՌՍՏՐԱԼԻԱ

|                               |           |         |
|-------------------------------|-----------|---------|
| Նոր Կալէս հարաւային           | 1624,9    | 220,474 |
| Տիէմէնի երկիր                 | 1130,37   | 80,164  |
| Աւստրալիա                     |           |         |
| Մ. Բրանտան                    | 4709,9    | 4,460   |
| Հարաւային                     | 7064,8    | 70,000  |
| Ֆալքլանդ կամ Մալուինէան կղզիք | 113,03    | 17,000  |
| Նոր Զելանտա                   |           | 200,000 |
|                               | 14,643,00 | 592,098 |

ԱՍԻԱ

|        |          |           |
|--------|----------|-----------|
| Սէյլան | 1116 . . | 1,551,350 |
|--------|----------|-----------|

Հոնկ-Կոնկ և Լապուան կղզիներն որ 1846<sup>էն</sup> դեկտեմբերի 18<sup>էն</sup> Պորնէյի սուլդանը շինացոյցմէ առնելով անգղիացւոց տուաւ դաշնադրութեամբ, ա. նոր համար ալ դեռ որոշ չգիտցուիր ինչ տարածութիւն և բնակիչ ունենալին:

ԱՆԳՂԻԱՏԻՈՑ ՀՆԴԿԱՍՏԱՆ

|         |        |            |
|---------|--------|------------|
| Պենկալա | 10,226 | 60,000,000 |
| Ակաա    | 4,187  | 20,000,000 |
| Մատրաս  | 6,684  | 13,508,527 |
| Պոմպայի | 3,058  | 6,251,546  |
|         | 24,155 | 99,760,073 |

Լնգղիացւոց Հարկատու համալսարաններէն Լեան Կալի Կալի-Կալի երկրները:

Լըրոպայի մէջ Հոնկական կղզիները ուրոնք բնակիչն է 230,000: Իսկ արեւելեան Հնդկաստանի մէջ գրեթէ մօտ 35,000,000 ժողովուրդ հարկատու ու անգղիացւոց պաշտպանութեան տակ են, որուն մէջը խել մը թագաւորութիւններ ու իշխանութիւններ կան:



զոր օրինակ Մլաճապատ որ չորս փոքր իշխանութիւններէ կը բաղկանայ, Մուտ, Մկռահ, Տէշի, Մթմիր, Պոթակ, Պուռնտի, Պիքանիր, Մաղուր, Սայի սուր, Սփրավանքոր, Վոշին, Սաթա-րահ, Սոլքոնտա, Սիքքին, Սալուա, Պութան, Շինտուր և ուրիշ վեց եօթը պզտի մշտի տէրութիւններ ալ, որոնցմէ ոմանք պարզ իշխանութիւններ կամ պէյութիւններ են, զորոնք անգղիացիք պաշտպանելու անունով չէ թէ միայն հարկատու ըրեր են, այլ տիրելէն աւելի բռնացած են վրանին բոլորն ալ պահապան զօրքերով լեցնելով:

Եւ անգղիացւոց ունեցած այլ և այլ երկիրներուն տարածութեանն ու բնակչացը բովանդակութիւնը կ'ըլայ.

մլ. քառ. Ֆգր. Բնակիչ.

|                                         |            |             |
|-----------------------------------------|------------|-------------|
| Բուն Անգղիա                             | 5,701,05   | 27,232,182  |
| Եւրոպայի մէջ ունեցած աշխարհակալութիւնին | 10,82      | 132,371     |
| Եւրոպայէ դուրս.                         |            |             |
| Արևմտ. Հնդկաստ.                         | 8,348,21   | 900,882     |
| Հիւսիս. Ամերիկա                         | 37,890,43  | 2,121,152   |
| Աւստրալիա                               | 14,643,00  | 592,098     |
| Աֆրիկէ                                  | 9,460,62   | 449,118     |
| Ասիոյ մէջ Սէյլան կղ.                    | 1,116,     | 1,551,350   |
| Արևելեան Հնդ.                           | 24,155,    | 99,760,073  |
|                                         | 101,325,13 | 132,739,226 |

|                                                         |            |             |
|---------------------------------------------------------|------------|-------------|
| Հարկատու կամ պաշտպանութեան տակ եղածները. Յոնիական կղզիք |            | 230,000     |
| Հնդկաստան եղածները                                      | 24,640     | 35,000,000  |
| որով կ'ըլայ Է ամէնը                                     | 125,965,13 | 167,969,226 |

Եւ անբաւ աշխարհակալութիւններով չատանալով անգղիացիք, ետեւէն տարի տարուան վրայ աւելցնելու նորանոր երկրակալութիւններ ալ ամէն կողմէն կամ դաշնադրութեամբ և կամ ճարտարութեամբ, որով աս վերջի տարիներս միայն իրեք չորս միլիոն ժողովուրդ և խել մը երկիրներ հարկատու ըրին, կամ պաշտպանելու պատրուակաւ տիրապետեցին: 1846<sup>ին</sup> Յունիսի 13 եղած դաշնադրութեամբ Սիպրոսի Միսիսի ( )րէկոն կամ Վիլմանիա քաւառը Սոլքովի կղզիով անգղիացւոց

անցաւ որ 7800 քառ. մղ. է ու մօտ 70,80 հազար բնակիչ ունի: Սոյն տարին շինացոյցմէ առաւ Հոնկ-Կոնկը ու Սապուան կղզին. դարձեալ նոյն տարին մարտի 9<sup>ին</sup> Սահորի հետ խաղաղութեւ դաշինք գնելով խել մը երկիրներ առաւ. վերջը 1849<sup>ին</sup> Բենճապն ալ առաւ որոնք ընդ ամէնը 4700 քառ. մղ. է և 3,000,000<sup>ի</sup> չափ ալ բնակիչ ունի: 1850<sup>ին</sup> Տանիմարքացոյցմէ գնեց 10,000 լիրա սթերլինի Միլիկէի մէջ Վաբ-քորս ըստածը որ մօտ 40,000 բնակիչ ունի: Սոյնպէս Տանիմարքացոյցմէ գնեցին Սփրինգեպարն ու Սերամբուրը որոնք 25,750 բնակիչ ու 26 քառ. մղ. տարածութիւն ունին:

Միգղիացիք մասնաւոր կերպով յարմարութիւն մը ունին տիրապետած երկիրն ծաղկեցնելու ու վայրենի ժողովուրդները քաղաքականացնելու իրենց գաղթականներուն ձեռքովը, որ հարկաւոր սեպուած տեղերը կը զըրկեն գրեթէ ամէն տարի. մենք հոս օրինակի համար մէկ տարուանը միայն գնենք, թէ որչափ ժողովուրդ Միգղիոյ երկրէն դուրս կ'ելլէ. 1840<sup>ին</sup> գաղթական գացած ժողովրդեան թիւն էր,

|                           |        |
|---------------------------|--------|
| Սիպրոսի նահանգները գաղթած | 38,495 |
| Հիւսիսային Միլիկա         | 27,025 |
| Միգղիական կղզիները        | 1,938  |
| Սիլուի բարեյուսոյ         | 513    |
| Սոր Օելանտա               | 1,338  |
| Սոր Սիլլէս հարաւային      | 14,437 |
| Համագումար                | 83,746 |

Եւ վերի դրած ցուցակներնէս կրնայ քիչ չատ իմացուիլ անգղիացւոց գաղթականութեան չափը. թէպէտ և ամէն տարի այսչափ չըլար, բայց միշտ անպակաս է, որով կրցեր են այսչափ ժողովուրդներու և ազգերու տիրել և խաղաղութեամբ կառավարել. որովհետեւ ամէն տեղ ժողովրդեան գոնէ չորսին կամ հինգին մէկը անգղիացի է. զինուորութիւնը գրեթէ բոլոր անգղիացւոցմէ բաղկացած է: Թէ որ բոլոր աշխարհ-



քիս այլ և այլ կողմերը գտնուած անգլիացիները մէկ տեղ համրելու ըլլանք, ինչպէս Սիւրբալի, Կահանգացը, Տրնդկաստանիները, Վերիկայի ամէն տեղում մէջ գտնուածները որոնք գաղթականութեամբ ցրուած են՝ չէ թէ 27 միլիոն կ'ելլէ անգլիացւոց ազգը հապա 60,65 միլիոն ալ կը հասնի։ Ուրիշ անգամներով կը խօսինք անգլիացւոց կառավարութեան կերպին, հարստութեանը, վաճառականութեան, ձեռագործներուն և ուրիշ իրենց յատկութեանցը վրայ, որով աւելի պայծառ գաղափար կրնանք տալ աս ազգին ահաւոր մեծութեանը վրայ։

Հ. Հ. Թ

ԼՈՒՏՐԱՅԻ ՄԷՋ ԱՌԱՒՕՏ ՄԸ

ԿԱՄ

ՊԼՏՊԼՆՈՂԱԿԱՆ ՈՒ ԱԸԽԱՐՀԱԿՈՐԾԱՆ  
ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ 1

“ ՀՈՍ ուրիշ նպատակներու վրայ պիտի խօսինք. որ թէպէտ առջի յիշուածներուն պէս ուղղակի կերպով չեն. բայց անոնք ալ մեր ժողովրդեան գործաւոր մասին խեղճութեան առաջը առնելու համար են։ Այս ընկերութիւններուն ամենուն ալ նպատակն է՝ էրիկ մարդ ու կնիկ մարդ բանուորներու ապրելու բաւական միջոցներ ճարել, և անոնց ծերութեան կամ անկարութեան օրերուն համար բաւական դրամագլուխ մը կամ եկամուտ մը պատրաստել։ Այսինքն ալ ցանկը միւս ողորմածական ընկերութեց պէս բազմաթիւ է, որոնց ամենուն ալ պակասորդը հարուստներուն կամաւոր տուրքերով կը լեցուի։

“ Այսինքն ընկերութիւններ կան եկեղեցականաց համար, զօրաց համար, նաւաստեաց համար, զրազիտաց համար, գեղարուեստագիտաց համար, այր և կին ուսուցչաց համար, վերջապէս

ազգի մը մէջ գտնուած ամէն արհեստից համար։

“ Այսինքն էտքը նշանակուած են ուրիշ նպատակ ընկերութիւններ՝ աղքատներուն կրթութեանը համար, որոնց ցուցակը հատորին կէսը լեցուցած է։

“ Ատքը՝ յատուկ կրօնական ընկերութիւնները որոնց նպատակն է՝ բարեպաշտական գրքեր ձրի տարածել ժողովրդեան մէջ։

“ Ատքը՝ ուրիշ ընկերութիւններ սուրբ Վիրք տպելու ու բոլոր աշխարհքի մէջ ձրի բաժնելու համար, այս ընկերութեան անդամոց խնամքովը ու անհուն ծախքովը ամէն օթ և աններուն սենեակները, ամէն շոգենաւերուն խուցերը, ամէն գինետուններուն ու կերակրատուններուն գրասենեակները պէտք է որ կազմած նոր կտակարան մը գտնուի. ճանապարհորդ մը իր առանձնաբնակ սենեակը մտած ատենը կը պարտաւորի, գոնէ ժամանակ անցընելու համար, բաւալու այն գիրքը, որ իր անմահական վախճանին վրայ կը խօսի։ Վախուն վերեւը բարեկամ մը կը գտնէ, որ իր պարապոյ ժամերը կը դիտէ և կը սպասէ, որ իր խորհուրդները սրբէ։

“ Ատքը՝ կրօնական քարոզութեանց ընկերութիւնները, թէ՛ Վեգլիոյ մէջ գտնուած ամէն տեսակ արհեստաւորաց համար և թէ՛ դրսի ամէն երկիրներու համար։

“ Ատքը՝ գերութիւնը վերցունելու ընկերութիւնը, որ արդէն Վեգլիոյ և Վաղղիոյ մէջ իր նպատակին հասած, կ'աշխատի բոլոր աշխարհքի մէջէն ալ վերցունել այս մարդկութեան հակառակ անօրէնութիւնը։

“ Ատքը՝ խաղաղասիրաց ընկերութիւնը, որ կը ջանայ փիլիսոփայութիւնը ամենուն սիրելի ընելու, և մարդկութեան համար նոր քաղաքականութիւն մը և նոր կենցաղագիտութիւն ազգաց հաստատելու։

“ Ատքը՝ այն ընկերակցութիւնները, որոնց նպատակն է՝ զազիր և առողջութեան փնասակար բնակարանները վերցունել, ուր թշուառութիւնը վայ-